

ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԻԼ 20

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յուզմունքներ. — ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍԻՍԻՒՆ. Հա-
սարակական հարցեր. Հաւաքարի թաղում.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ.
Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — Հե-
ռօգրաֆի. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Հեռագիրները հաղորդեցին մի շարք
կէտերի մասին, որոնց շրջանում տեղի
ունեն ընդհարումներ հակառակորդների
առաջադարձ գնդերի մէջ: Օգտվելով այն
տեղեկութիւններից, որ տալիս են ար-
տասանման հաղորդագրութիւնները,
«НОВОСТИ» լրագիրը աշխատում է որո-
շել այն դիրքերը, որոնց ձգտում են եա-
լօնացիները հասնել իրանց ներկայ գոր-
ծողութիւններով: Եւրոպացիները հարա-
ւում ձգտում են իշխել Եւրոպայի գետաբե-
րանի վրա, իսկ հիւսիսում ամրանալ
Կանգէ քաղաքի շրջակայքում:

Համաձայն Մէլլից աստղագիտական
ներկայումս Զիլիանում ափ են իջեցր-
ված ռազմամթերք և պաշարեղէն, որոնք
ցամաքի ճանապարհներով կուղարկվեն
Իշթու: Ֆրանսիական «Temps» լրա-
գիրը ասելով հապտական զորքի թոյլ
կողմն է նրա հեծելազորքը և թրնա-
դանութիւնը: Հեծելազորքը իրան փայ-
լուն կերպով պահեց Զոնտուի մօտ ուռա-
ները հետ ընդհարման ժամանակ, բայց
ձիերը թոյլ են և վատավարժ: Հէնց որ
եղածները կոչնչանան, նրանց փոխա-
րինելու համար նշանակված ձիերը իրանց
անպէտքութեամբ կը դանդաղեցնեն եա-
լօնական զորքի շարժումները:

Յիւստայում այժմ նաւերի վրա են
բարձրվում պաշարման համար նշանակված
թնդանութիւններ, որոնք պէտք է ուղարկվեն
Պորտ-Արտուրի դէմ: Նոյն տեղից կու-
ղարկվեն և զորքեր:

Ինչ վերաբերում է հիւսիսին, անգլիա-
կան «Daily Telegraph» լրագրի ասելով,
հապտական զորքը, գնեւրալ Կուրօկի
հրամանատարութեամբ, առաջ է ընթա-
նում ներկայումս Եւրոպայի միջին հո-
սանքով դէպի վեր, որպէս զի անդրա-
ցանէ ուռաց գետերով Կաշտայիսկու
դիրքը գետի աջ ափում: Առաջ անհաւա-
տալի էին համարում մի այդպիսի ծրա-
գիր, որովհետեւ շատ դժուար է գոր-
քեր շարժել ճանապարհներից գոբի
սարուտ տեղերում, բայց ժիլիսկի և
Միշչենկո գետերի գեկուցումները
ցոյց են տալիս, որ կարծես հապտացի-
ները զբաղված են այդ ծրագրի իրագոր-
ծութեամբ, որ կը պահանջէ ինժեներնե-
րից երկու շարքի աշխատանք: Այդ շարժ-
ման նպատակէն է Կանգէ:

Կանգէ կամ Կանգի քաղաքում միա-
նում են հիւսիսային Կորէայի կենտրո-
նական գաւառները բոլոր ուղիները, ի
միջի այլոց և դէպի Գիբրի տանող ճա-
նապարհը Մասէրլանի վրայով: Կանգէն
իշխում է և այն ճանապարհի վրա, որ
գալիս է Պէնինսուլից: Նա յենակէտ կը
հանդիսանայ դեպքում ուռաց գործերի
այն գործողութիւնները, որոնք ուղղված
կը լինեն Գիբրիից և Վլադիվոստոկից
Կորէայի դէմ, եթէ ճշգրի գնեւրալ Կու-
րայտիկներն վերաբերված ծրագրի մշ-
նանք 200,000 հոգի զորով առաջ ըն-
թանալ Վլադիվոստոկից դէպի Մէլուր
Կանգէն գտնվում է Իշթու քաղաքից մօտ
180 և Եւրոպայի մերձակայ ափից 30
վերստ հեռավորութեան վրա (տես քար-
տէզ):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

Գիւղը եւ քաղաքը

III

Մեր անցեալ յօդուածում մենք յայտնել էինք
այն միտքը, որ մարդկային հասարակութիւն-
ների բարօրութեան արմատը, նրանց շարժող
ուժը տնտեսութիւնն է. տնտեսութիւնն է այն
հիմքը, որի վրա չափվում, ձևվում են հասա-
րակական ինստիտուտները, մարդկային գա-
սակարգերը ու նրանց յարաբերութիւնները:

Մեն չենք ուզում մոռնել տնտեսական հար-
ցերի ընթացիկ մէջ չենք ուզում վերլուծել,
թէ ինչ է տնտեսութիւնը, ինչպէս է նա զար-
գանում, ինչ ֆակտորներ կամ գործոններ
բռնում են նրա մէջ ինչպիսի տեղեր: Ոչ, դա
դուրս է մեր նիւթից:

Մենք ուզում ենք մի քանի խօսքով բնորո-
շել տնտեսութեան տեսակները փոխանակու-
թեան, իրենի, առժեգների և ապագայում էլ ապ-
րանքների առևտուրի տեսակետից:

Կան ժողովուրդներ, որ պարագում են ձկնոր-
սութիւնով, կան էլ երկրներ, որոնք նաք են
տալիս իրանց բնակիչներին պարագելու գըլ-
խաւորապէս կամ երկրագործութիւնով, կամ
խաշնարածութիւնով, կամ առևտուրով, նաւա-
գնացութիւնով և այլն: Ապագայում այդ քիչ
ու շատ միօրինակ զբաղմունք ունեցող ցեղերն
ու ազգերը կազմում են մասն ու խոշոր պե-
տութիւններ, զարգանում, առաջադիւմ են
տնտեսութեան մէջ: Աշխատանքը բաժանվում
է հասարակութեան ներսում. մի խումբ մար-
դիկ վաճառական են դառնում, մի ուրիշ խումբ
արհեստաւոր, մի երրորդ խումբ՝ երկրագործ
և այլն:

Աշխատանքի բաժանումը հասարակութեան
ներսում քանի գնում աւելի և աւելի խտա-
նում է: Առաջանում են մասնագէտ արհեստա-
ւորներ, որոնք շինում են միայն մի իր, գոր-
ծածական մէկ արժէք. մէկը միայն գլխարկ է
կարում, միւսը՝ կոշիկ, երրորդը՝ զգեստ, չոր-
րորդը միայն երկաթէ գործիքներ է պատրաս-
տում, հինգերորդը՝ թիթիկ է աշխ, և այլն:
Իսկ դրանց կողքին մնում է գիւղական դասա-
կարգը, որ շարունակում է կրկին հացահա-
տիկներ մշակել, խաշնարածութիւնով պարա-
պել:

Այդ բաժանման արդիւնքներն իրար հետ
փոխանակվում են. ով ինչ բան շատ ունի,
մի մասը տալիս է դրանից չունեցողին և ստա-
նում նրանից այն, ինչ որ նա շատ ունի և
որին ինքը կարիք ունի:

Անա այդ երեքը կուլում է փոխանակութիւն:
Փոխանակութիւնը հին է, շատ հին. նա մի և
նոյն տարիք ունի, ինչ և մարդկային հասա-
րակութիւնը: Չէ կարելի երեւակայել մի խումբ
մարդկային էակներ իրար մօտ, մի խումբ
կամ համայնքում ապրելիս՝ առանց փոխանա-
կութեան:

Անգղաբազմ և մանր հասարակութիւնների
մէջ փոփոխութիւնը կատարվում է սաստիկ
սահմանափակ չափերով: Որքան հասարակու-
թիւնը զարգանում է, այնքան նրա մէջ գորա-
նում է աշխատանքի բաժանումը, նոյնքան էլ
մեծանում փոխանակութեան թէ քանակը և թէ
նրա առաքականը:

Փոխանակութեան զարգանալու հետ միասին
կամայք կամայք կարիք է դրացվում մի առան-
ձին դասակարգ մարդիկների, որոնք միջնորդ
հանդիսանալիս իմ և քո մէջ. մի արդիւնաբե-
րողից առնէին նրա աւելորդ արդիւնքը, տա-
նէին մի ուրիշ տեղ, ուր այդ արդիւնքի կա-
րելի էր գաղտնի և այնտեղից բերէին այն,
ինչի պէտք կայ այստեղ:

Առաջանում է այդ միջնորդ դասակարգը,
խոնարհ, փոքր, ողորմելի, կախած այս ու
այն արդիւնաբերողից: Բայց նրա պայմաններն
այնպէս էին, որ ապագան նրան էր պատկա-
նում: Նա նստակեաց չէր, կպած չէր հողի մի
անկիւնին երկրագործի նման. նա չէր փակ-
ված չորս պատերի մէջ արհեստաւորի նը-
ման. նա չէր թափառում բնութեան ազա-

զրկում միայն, քոյրեր ու անտաններ, դաշ-
տերի ու լեռների մէջ ինչպէս հովիւ: Ոչ,
նա մտնում էր բոլոր գասակարգերի մէջ, գը-
նում էր շատ գիւղեր ու քաղաքներ, երկրից-
երկիր. նա առաջին մարդն էր, որ այդքան
շատ շատ բան էր տեսնում, շատ մարդկանց հետ
չփոխում՝ զարգանում: Նրան շրջապատողները
բոլորը մնում էին ծանրաշարժ ուղեղով, միա-
կողմանի, նեղ աշխարհայեացքով, իսկ ինքը
բազմակողմանի էր դառնում, սրվում էր նրա
ուղեղը, ընդարձակվում նրա մտաւոր հորի-
զոնը:

Անա փոխանակութեան համառոտ պատկերը
սկզբնական հասարակութիւնների մէջ:

Փոխանակութեան տեսակէտից նայելով,
տնտեսական գիտութիւնը ճանաչում է երեք
տեսակ տնտեսութեան ձև. ա) բնական, բ) մանր
փայլիկ և գ) խոշոր դրամատիկական կամ կա-
պիտալիստական տնտեսութիւնները:

Համառոտապէս ընկնէ տնտեսութեան այդ
տեսակները և տեսնենք, թէ ճիշդ մէջ էր նը-
րանցից մեր գիւղը կէս դար առաջ և է այժմ:
Ի թէ ճիշդ մէջ են այժմ կողմանի մեծ քաղաք-
ները:

Խաժակ

ՀԱՆՔԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, ապրիլի 18-ին, Հաւաքարի Արա-
սանի թատրոնում ցերեկով տեղի ունեցաւ
հայերէն ներկայացում, բաղկացած երեք մա-
սից: Տրվեցին «Բաղրամասը Մարաթ», «Մար-
տիրիկի անցք» և «Մոնայի նշանները» պիես-
ները: Թատրոնը լիքն էր հասարակութեամբ:
Բաղրամասը աղբարի դերակատար Սանթրու-
ճեան ուսումնասիրել էր դերը և տալիս էր նրան
բնորոշ գծեր, շարժվում է և խօսում ընդհան-
րապէս աշող, բայց չէ կարողանում տիրել իր
ձայնին, որը հնչվում է խուլ կերպով, ծած-
կելով առանձին բառերը: Տիկին Արաքսեան
Անուշի դերում նաղելի էր և առհասարակ գո-
հացուցիչ, սակայն ներկայացում էր չափա-
դանց պարզամիտ աղջկայ մի տիպ. պէտք էր
աւելացնել աշխուժութիւնը և տալ նրան չա-
րածիւրութեան գծեր: Միւս դերակատարները
բաւարար էին իրանց դերերում և նպաստե-
ցին պիեսի ամբողջութեան:

«Մարտիրիկի անցք» մէջ գլխաւոր դերա-
կատարներն էին տիկին Զարէլ և Ամօ-Խալա-
զեան: Պիեսի միտքը էր ապացուցանել, որ
խոնարհութիւնը վատ բան է և դերասաննե-
րը, որքան պատուիրել էր պիեսը իր սահման-
ներում, ապացուցեցին բաւարար խաղով:

«Մոնայի նշանները» մի նոր պիես է, հե-
ղինակութիւն Յ. Եսայեանի: Նա ունի յատ-
կանիչ գծեր ժողովրդական թատրոնի ընթաց-
քայլի մէջ մտնելու համար: Նիւթը վերցրած
է Հաւաքարի կեանքից և պատմում է հարս-
նախօսութեան և մօցիքուլութեան շուրջը: Երե-
ւոյթները խորը չեն շոշափված և գործողների
դիմագծերը թերի են, սակայն տեսարանները
բնորոշ են և հետաքրքրում են հանդիսական-
ներին: Պիեսը թէ՛ն անուանված է կօմեդիա,
թողնում է աւելի դաւեշտի կամ ֆարսի տպա-
ւորութիւն: Նա կարող է գոյութիւն պահպա-
նել ժողովրդական բեմի վրա, բայց պէտք է
ենթադրվի մի քանի բարեփոխութիւնների:
Օրինակ, երկրորդ գործողութեան սկիզբը չա-
փազանց ձգձգված է և թուլացնում է առաջին
գործողութեան աշխոյժ տպաւորութիւնը: Նը-
կու անգամ դուրս է բերված մուկ յայտնվե-
լու դէպքը. նրանցից մէկը պէտք է դնէ զգի-
րաբանների ոճաբանութիւնը չէ պահպան-
ված հարազատութեամբ: Մօցիքուլի վրէժի
շարժառիթը շատ աննշան է վերցված:

Պիեսի նիւթը հին է, որը գեւ. բառասուն
տարի արանից առաջ շոշափվել է հայերէն ա-
ռաջին կենցաղավարական պիեսների մէջ, ինչ-
պէս, օրինակ, Միքայել Պատկանեանի և ու-
րիշների գրուածքների մէջ, մի փոքր փոփո-
խութեամբ գործողների և միջավայրի վերա-
բերութեամբ. բայց իր որոշ հետաքրքրութիւ-
նը դեռ չէ սպառել ժողովրդական բեմի համար:

Դերակատարները ուսումնասիրել էին իրանց
դերերը բաւարար կերպով: Մանաւանդ աշող
էին օր. Գնարիկ՝ մօցիքուլ Օսանի դերում և
Բարուբեան՝ ծառայի դերում: Տիկին Արաք-
սեանին և օր. Հեղինէին աղովկեց ներկայաց-
նել Հաւաքարի շրջանի սահմանափակ, խղճ-
ճուկ յաւակնութիւններով մայր ու աղջկայ
պատկերները: Պ.պ. Աղաբէգ և Փրոնմեան
բնորոշ էին:

Դերակատարները արժանացան բոլոր ծա-
փահարութիւնների և պիեսի հեղինակը բեմ
կանչվեց:

Սիրող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները լսել են, որ վճռված է շինել
սիբիրեան երկաթուղու երկրորդ գիծ: Կառու-
ցումը կը վերջանայ իբրեւ թէ 1 1/2 տարում և
հարկաւոր կը լինի 160,000,000 պուլ երկաթէ
բեկներ:

Ներկայ ապրիլի 24-ին, շաբաթ օրը, Ար-
տիստական ընկերութեան թատրոնում Հայոց
Դրամատիկական ընկերութեան դերասանական
խումբը՝ մասնակցութեամբ տիկին Սիրանոյշի,
տ. Վ. Մամուկեանի և պ. Համբարձումեանի՝
կը ներկայացնէ ինժեներ Կոստանդին Սատի-
սեանի նոր ինքնուրոյն պիէսը—«Ճանճի մէջ»
—գրամա 5 գործողութեամբ և «Ընտանեկան
փոթորիկ» վոյբով: Ներկայացման զուտ ար-
դիւնքը նշանակված է Դրամատիկական ընկե-
րութեան դիֆիցիտի մի մասը ծածկելու հա-
մար: Պիէսի նիւթը վերցված է հայ ուսանող-
ների համալսարանական՝ իդէալիստ կեանքից
և նոյն մարդկանց կեանքից տարիներ յետոյ
փոփոխ աշխարհում, «Սօցիալ-Դոմոր» Բազում:

Ինչպէս լսել են մի քանի լրագիրներ, ժո-
ղովրդական լուսաւորութեան միջնորդութեան
նոր կառավարիչը մասնաւոր խօսակցութեան
մէջ յայտնել է այն կարծիքը, որ անհրաժեշտ
է մանկավարժական մարմինների անդամներ
ոռճիկներն աւելացնել, որպէս զի աւելի լաւ
ուժեղ ձգտեն դէպի այդ գեղեցիկ ապագայը:

Լրագիրները հաղորդում են, որ ֆինանսնե-
րի միջնորդութեան մէջ կազմվել է մի ծրա-
գիր սպիրտի ակցիզը բարձրացնելու իւրա-
քանչիւր աստիճանին (գրադուս) 1 1/2 կօպեկ,
աչքի առաջ ունենալով ուսու-եւսողական պա-
տերազմի կարիքները:

Կիրակի, ապրիլի 18-ին, Հաւաքարում, պ.
Մուրադի թատրոնում, հայ սիրողները, մաս-
նակցութեամբ դերասան Ալիսանեանի, տուրի
ցերեկվայ հանրամատչելի ներկայացում, խա-
ղալով «Ասլան-Բալասի» պատմական պիեսան,
փոխադրութիւն Սարգսեանի: Թատրոնը գրե-
թէ լիքն էր, բացի առաջին երկու կարգերից:
Ողջ կենդանի անցաւ, մեծ զուարճութիւն
պատճառելով հանդիսականներին: Աչքի էին
ընկնում իրանց խաղով պ.պ. Ալիսանեան,
Սարեան, Սողոմոնեան և Ղուչեան: Վերջինս
իր խաղով ցոյց տուեց իր կատարելա ընդու-
նակութիւնը ժողովրդական կեանքից վերցրած
դերերում: Վատ չէին նմանապէս տ. Յովհան-
նիսեանը և օր. Բէգիշեանը, որոնք աւելի
փորձվածի տպաւորութիւն էին թողնում, քան
սիրողի: Այդ օրը միաժամանակ ներկայացում
կար և պ. Արաքսեանի թատրոնում: Յանկալի
չէ, որ ապագայում տեղի ունենայ այդպիսի
զուգադիպութիւն, որով անշուշտ կը վնասվեն
ոչ միայն իրանք, այլ և այն գործը, որին
իրանք կամենում են ծառայած լինել:

անցեալ տարիները՝ չը կան, այլ և առանձին անհատները դէպքի թիւերը քաղցիւն անգամ հազիւ է նշմարվում: Գաղթականութեան դաշարակը պէտք է բացատրել բացառապէս նրա-նով, որ թիւերը քաղցիւն անգամ հազիւ է նշմարվում և շատ-շատ անհատներ լուրեր այնտեղ իրանց բաշտած նիւթական նեղութիւնների և տնտեսական ողորմելի կեանքի մասին: (Կաւ.)

Մեզ հաղորդում են, որ Նաւթուղում գրան-վող դրագոնների զորագումը, դիմելով թիֆ-լիսի քաղաքային վարչութեան, խնդրում է արագացնել Նաւթուղի միացումը քաղաքի կենտրոնին հետ ձիաքարով, որով հեշտացրած կը լինի յարաբերութիւնը քաղաքի այդ մասի և կենտրոնի մէջ:

Երկրագործութեան միութեան Ա. Ա. Երմո-լովը թոյլատրել է, ինչպէս հաղորդում է «Ноб.» ընդերը, Մոսկվայի «Կիւմայի» յարմարեցնող ընկերութեանը՝ ներկայ տարվայ ամառը կազմակերպել մեղուարծութեան համառուական ցուցահանդէս, որի ժամանակ հրաւիրել և մեղուարծների համաժողով:

Ժողովրդական լուսաւորութեան միութեան թիւերը բացատրում է, որ միջնակարգ գիւղա-տնտեսական դպրոցներն աւարտած անձերն իրաւունք ունեն տարրական դպրոցների ուսուցիչ լինելու, առանց առանձին քննութեան, միայն փորձնական մէկ դաս տալով:

«Новый. Край.» լրագրի խմբագիր Պ. Ա. Արտեմիևը դիտարկութիւն ունի խնդրել, որ թոյլատրեն իրան թերթի խմբագրութիւնը Պորտ-Արտաբերց տեղափոխել կամ Խարբին կամ Մուկդէն:

Ներքին-Արտաբերց գրում են մեզ հետե-ւալը. «Ներկայումս մեր գիւղը ներկայաց-նում է մի տխուր տեսարան: Մեր գիւղա-պատկան հանդերձ երեւցել է սաստիկ մո-րիկ մոտաւորապէս չորս վերստ լայնութիւն և հինգ վերստ երկարութիւն ունեցող տարա-ծութեան վրա, այնպէս որ բոլորովին ազատ տեղ չկար տեսնում: Մի 20 օր անցնելուց յի-տոյ մորիկը կը բռնէ չորս անգամ աւելի մեծ տեղ: Ամեն մի անից դուրս են գալիս մարդ, կին ու երեխաներ, մօտաւորապէս օրական 500 մշակ և ամբողջ օրը կուռն են մորիկի դէմ: Բացի մեր գիւղից ուրիշ տեղերից էլ են գալիս օգնութեան: Մարդիկ էլ չեն կարողա-նում ուրիշ գործի գնալ: Տեղական վարչու-թեան հրամանը այնպէս է, որ մէկ տան մէջ կըստ որքան մարդ, թէ կին, երեխայ կայ, պէտք է բոլորն էլ դաշտում լինեն և մորիկի դէմ կուռն: Մինչև մէկ ամիս կարող է կեն-դանի մարդուն էլ ուտել այս անպիտան մի-ջատը: Մորիկի պատճառով ամեն ուտելիքը թանգացել է. ցորենի պուրը ծախվում է 1 ր. 70 կօպէկ, գարին 1 ր. 30 կ., խոտի պուրը 40 կօպէկ, դարմանը պուրը 30 կօպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐԶԸ

Կուի նախընթաց օրը Պատերազմով կողմերի գնահատական ոյժերը սկսում են հետզհետէ կենտրոնանալ Եալու գետի վրա: Այդ ցոյց է տալիս, որ շուտով տեղի կունենան լուրջ ընդ-հարուճումներ: Կանխելով դէպքերը, «Daily Chronicle» թերթի Սէուլից ստացված հեռա-գիրը հաղորդեց, իբր թէ Եալու գետի վրա արդէն տեղի է ունեցել խոշոր զորք, որի մանրամասնութիւնները չէ կարելի հրատա-րակել ռազմագիտական նկատումներով: «Morning Post»-ին հաղորդում են Շանգայից, որ եապոնական առաջին զօրքը արդէն անցել է Եալու գետը, չը հանդիպելով որ և է լուրջ ընդհարման: (НОВОСТИ)

Գործողութիւնները ցամաքի վրա: «N. Fr. Presse» լրագրի պատերազմական թղթակիցը նկատում է. «Այն հանգամանքը, որ գնեղաւ Կուրօպատկինը մի քանի օր առաջ թոյլատ-րեց հւրօպական թղթակիցներին հետեւել ռուսաց զօրքին, կարող է իբրեւ ապացոյց ծառայել, որ ռուսները բոլորովին պատրաստ են և որ լուրջ գործողութիւնները ցամաքի վրա պէտք է սկսվեն ամենամօտ ժամանակ-ներում: Պէտք է նկատել, որ համապատաս-խան կարգադրութիւն արված է և եապոնա-կան կողմից»:

Ռուսների գործողութիւնները Մանչու-րիայում: Ռուսական զօրքերի գործողութիւնները Ման-չուրիայում չափազանց դժուարանում են, և

չնորհիւ հապօնական լրտեսների անգին բա-նակութեան: Նիւ-Չուանը վկայում է լրտես-ներից, որոնք «Times» լրագրի ստեղծով, ծրու-տեալ են որը առեւտրական հապօնաւոր, որը մուրացկանի զգգված շրջերով, որը ծառայի կամ մշակի զգեստով: Նրանք նոյն խել ծամեր են անցնել իրանց գլխի վրա, որ ցոյց է տալիս, թէ վաղուց այդ բանին պատրաստվել են: Նրանք ամեն տեղ շրջում են և հէնց որ որ և է տեղեկութիւն են ստանում, իսկոյն անցնում են միւս ափը, չինական հողի վրա, որտեղից հեռագրիչներ են տալիս գլխաւոր բանակը: Նրանցից մի քանիսն բռնում են, բայց մի քանիսը կարողանում են խոյ տալ: (Рыс. Вѣд.)

Չինական երկաթուղիի եւ Ռուսաստանը: «Ma- tin» լրագրի թղթակիցը հաղորդում է Պար-բինից հետաքրքիր տեղեկութիւններ այն պայ- մանագրի մասին, որ կնքվել է Ռուսաստանի և արեւելեան-չինական ընկերութեան մէջ: Հա-մաձայն այդ պայմանագրի, Ռուսաստանը պէտք է յանձնէ Չինաստանին երկաթուղի և շարժական կազմը, միայն 99 տարուց յետոյ: Այդ պատճառով նշանակութիւն ունի այն փաստը, որ ընկերութիւնը գնել է չինական ժողովրդից ընդարձակ հողեր երկաթուղու գծի վրա: Իրանով նա հանդիսանում է մըշ-տնչեաւորապէս այդ հողերի տէր: Պարբինը և ուրիշ քաղաքները պատկանում են նրան: Եթէ Ռուսաստանը երբ և է կը յանձնէ ճա-նապարհը Չինաստանին, վերջին երկու կող- մերից ևս շրջապատված կը լինի ռուսական կալուածներով, որովհետեւ ռուսները գնել են հող չինացիներից: Կալուածագրերի մեծ մասը գրված են ոչ միայն ռուսերէն և չինարէն, այլ և ֆրանսերէն: (Рыс. Вѣд.):

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փրանսիական հանրապետութեան նախա-գահ Լուրէի այցելութիւնը իտալական արքա-յական զուգին և նրա ուղեւորութիւնը Իտա-լիայում երկրորդ միջազգային խոշոր դէպքն է անգլո-ֆրանսիական համաձայնութեան հետ միասին: Այդ առիթով, ապրիլի 14-ին, հե-ռագրում են Հոմից, որ այդ օրը Կիլիկիայում կայացած հանդիսաւոր ճաշի ժամանակ, իտա-լական թագաւորը, բաժակ առաջարկելով, հե-տեալ ձևով արտասանեց. «Պարզ ընդհանրա-յի սրտերը բաղխում են իմ սրտիս հետ, ող-ջունելով ի դէմն ձեր, պարոն նախագահ, մե-ծանոցի ֆրանսիական ազգի ներկայացուցչին: Մեր կառավարութիւնները հեշտութեամբ հա-մաձայնութեան եկան այն միահամուռ գործի մէջ, որ սկսված է ի նպատակ խաղաղութեան, այդ վեճ բարբի, որին ձգտում են բոլոր պե-տութիւնները, և, ստորագրելով դաշնադրութիւնը միջնորդ գաղափարի և բանաւորների մա-սին, ապահովացրին քաղաքական խաղա-ղութիւնը և ամրացրին սօցիալականը: Իտա-լիան և Փրանսիան, որոնք երկուսն էլ ծա-գում են հին լատինական կոնդից, պահպանե-ցին դաշնի ընթացքում ազգականութեան անշնչելի աւանդութիւններ և այժմ կնքում են իրանց բարեկամութիւնը այս յախտնական Հոմում, որ այնքան շատ ողբերում էր երկու ազգերի ազգայնական հանձարը: Պարոն նա-խագահ, այն օրակէի, երբ ես սկսում եմ ձեր ձեռքը, փառաւոր յիշողութիւններ լցնում են հոգիս ամենախնդաւոր զգացումներով: Այդ մտքերով, այդ գզացումներով, բարձրացնում եմ բաժակ Փրանսիայի բարգաւաճման և նրա արժանաւոր, ազնիւ պետի համար: Այդ բա-ժակից յետոյ երաժշտութիւնը նուազեց «Մար-սելիէզ» երգը: Լուրէն պատասխանեց. «Թա-գաւոր, ինձ դժուար է արտայայտել յուզ-մունքս և շնորհակալութիւնս, որոնք առաջ կա-նան իմ մէջ Ձեր Մեծութեան խօսքերից, այն-քան բարեկամական և այնքան ազնիւ, և այն փառաւոր, անսուսնալի ընդունելութեամբ, որով ամբողջ Իտալիան իր վիճապետի հետ միասին պատիւ արեց Փրանսիային: Ձեր խօս-քերը, արքայ, խորապէս կը զգածնի վաղը բոլոր ֆրանսիացիների սրտերը: Ի հարկէ, Փրանսիան և Իտալիան միայն այս օրվան չէին սպասում, որ յայտնեն իրանց մօտեցնող ազ-գակցութեան մասին, որը պահանջում է, եր-ջանկարար, որ նրանք բարեկամներ լինեն: Բայց ինձ համար, ինչպէս և ձեր մեծութեան համար, մեծ ուրախութիւն է լսել նրանց բա-րեկամութեան հաստատութիւնը այս փառաւոր Հոմում, որի մէջ ֆրանսիացիները և իտա-լացիները յարգում են իրանց ընդհանուր մօրը և իրանց հանձարը ու վեճ գործերի ոգեւորիչը: Մեր կառավարութիւնները հասկացան, թէ որքան կարեւոր էր համաձայնեցնել իրանց եր-կրների շահերը իրանց փոխադարձ համակ-րութիւնների հետ և նրանց բարիտաւոր միա-համուռ գործունէութիւնից ամենից առաջ ծա-գեց դաշնագիր արշաւանութեան մասին և դաշ-նագրի միջնորդ գաղափարի մասին, որոնց մէջ ես տեսնում եմ ձեզ հետ միասին նոր գրա-ւական քաղաքական խաղաղութեան համար և պողաքեր գործոն սօցիալական առաջադե-մութեան համար: Արքայ, մեծ, ընդհանուր յիշողութիւններով ի հոգովս, միացնում եմ իս լաժակի մէջ Իտալիայի մեծութիւնը և

ծաղկումը և ցանկանում եմ երջանկութիւն նրա ազնիւ վեճապետին և նրա ընտանիքին»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՆԻՆԻՅ

18 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ապրիլի 17-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Ալեքսանդրա Ֆէոդորովնա Օգոստափառ երեխաներով փո-խադրվեցին բնակութեան համար Յարսկո-Սիւր: «Օրէնքների ժողովածուի» մէջ տպված է անդրադարձնական կազմակերպի գիւղիկայի, 3-դ սերիերան հետեւի զօրաբանի և 9-րդ արեւելեան-սերիերան հրացանաձիգ բրիգադա-յի կազմակերպութեան մասին: Ապրիլի 17-ին ծովային զօրանոցներում գեներալ Բօգդանովիչ արտասանեց հայրենասիրական մի մեծ ճառ, ուղղված Չեմուլայի հերոսներին, որի մէջ, ի միջի այլոց, ասեց. «Չեմուլայի օղակը օտարազ-գի ծովափնայինները իրանց աչքով տեսան և յայտնեցին ամբողջ աշխարհին, որ ռուսական ծովափնային կարեւր է յաղթել անհաւասար կուռի մէջ, բայց անկարելի է ոչ յաղթել, ոչ էլ խախտել նրա ոգու մեծ ոյժը: Ընկերներ, դուք անձնուիրութեամբ կատարեցիք ձեր պարտքը. ձեր փառաւոր գործը Չեմուլայում արժանի է դասկիւռ ռուսական նաւատորմի պատմութեան մէջ արձանագրված մեծ բա-ճազօրծութիւնների շարքում: Չեմուլայի, Նա-ւարինի, Սիւրայի և Սեվաստոպոլի հին հերոս-ները ձեզ կանչին, ի թիւսները արժանի են իրանց պապերին և երբէք չեն արատաւորի Պրէյզի, Լազարի, Նախիմովի, Կորնիլովի և Իստոմիրի անմահ անունները: Ոգու մեծ ոյժ— ասա ռուսաց պետութեան գրօշակը, որ միշտ անհղաքար և ազնուաբար բռնած ունի մեր Գերագոյն Ղեկավարը: Կեցե՛ք մեր պաշտելի Թագաւոր Կայսրը»:

Աննկարագրելի է գեներալ Բօգդանովիչի ճառի առաջ բերած ոգեւ-րութիւնը:

ԲԱԼԱԿՎՈ: Ստոլիպինեան հանքային ջրե-րի վարչութիւնը առաջարկեց Կարմիր խաչին ձրի բժշկել և ապրիլի 17-ին յայտնեց հա-յաթիւն պատերազմական գործողութիւնների բնակի վերադարձող երկու օֆիցէրներին և 8 զինւորներին 1904 թ.ի սէզօնի ընթացքում:

ՍՅՅԱ: (Կառավարական ջրմաններից): «Գործնականացե՛ք Բիւրօ» յայտարարած բե-զֆիային բառարանների զինաթիւման դա-նադարացումը, որոնք գտնվում են Արիա-նօպոլում և Սալոնիկում, չէ կարող արգաւա-ցել Կ. Պոլսի թիւրքաց ջրմաններում անող այն առաւելութիւններով, թէ բոլորական կառավարութիւնը չէ դադարում զինաթիւն-այն ինչ իսկապէս այդ վերջինը դադարեցրեց զինաւորումը թիւրք-բոլորական համաձայ-նութիւնը ստորագրելու օրից և այժմ պահում է զօրքի այնքան թիւ, որքան որդւթած է երկ-րի կառարարի ապահովութեան ժամանակ:

ԻԿԱՆՏՍԱ: Մեծ Իշխան Կիւրի Վարկիթի-ովիչ այցելեց Վօդնէսէնի վանքը, ուր հանգ-չում են հայկազոյոս Ինտօկէստիի նշխարները, և ճանապարհ ընկաւ Պետերբուրգ:

18 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գլխաւոր շտաբի հաղորդա-գրութիւնը գործերի ընթացքի մասին Եալուի վրա մինչև ապրիլի 15-ը. «Վերջին օրերս գը-լխաւոր շտաբում ստացված պաշտօնական գե-կուցումներին համեմատ, ապրիլի 9-ին Եալու գետի վրա նկատվում էր եապոնական զօրքե-րի տեղափոխութիւնը փոքր խմբերով դէպի վերև ձախ ափով: Նրանց աւելի նշանաւոր զօրաբաժինները կենտրոնանում էին Ի-Չօուի դիմաց: Ապրիլի 10-ին եապոնացիները սկսե-ցին փոքր խմբեր անցկացնել Եալուի աջ ափի վրա. Սեասուպուլիսին մօտ անցաւ մօտ եր-կու վառ փորակութիւն հեծեակազօրքով: Ապրիլի 11-ի երեկոյից սկսեցին գեկուցումներ ստաց-վել այն մասին, որ թշնամին պատրաստվում է անցնել Ի-Չօուի, Տիւրէնչէնի և Չանչէն-խէլուի մօտ. ապրիլի 12-ին եապոնացիները սկսեցին կամուրջներ գնել Եալուի արեւելեան բազուկի վրայով Տիւրէնչէնի դիմաց և Սեաս-ուպուլիսին մօտ. մօտ երեք ժամին նրանք գրաւեցին Սօմալիւրա կղզին: Ապրիլի 13-ին, գիշերը, Սանդագու գիւղից դէպի հիւսիս գտնվող կղզին անցնելու ժամանակ 1500 եա-պոնացիներ դիմադրվեցին մեր կամաւորների կրակով, որոնք տեղի տալով հակառակորդի թաւան գերազանցութեանը, նաւակներով անցան ափը և այստեղից սկսեցին տաք հրա-ցանաձգութիւն, գրաւելով նեղ շաւիղ ափի երկարութեամբ դիւ ժալուի տակ: Կամաւոր-ները կորցրին կօմանդայի հրամանատար պօ-րուչիկ Սեմենովին և 18 զինւորներ սպանված

և վերաւորված. բայց, իր հերթում, նրանց կրակը եապոնացիների խիտ խմբերի վրա ա-մենամօտ տարածութիւնից պէտք է այդ վերջիններին նշանաւոր կորուստ պատճառէ: Ապրիլի 13-ին, առաւօտեան երեք ու կէս ժամին, հրացանաձգութիւն սկսվեց կղզիների վրա Տիւրէնչէնի դիմաց. մեր թնդանութի կրա-կով ոչնչացրեց այն կամաւորը, որ դրված էր Եալուի արեւելեան բազուկի վրայով Սօմալիւ-րա կղզու վրա, որը ստիպեց եապոնացիներին շարունակել գետն անցնել պօստօններով: Ապ-րիլի 13-ին մօտ 12 ժամին Ի-Չօուից աւելի հարաւ եապոնական զօրաբաժինը բառարեա-յով սկսեց արշաւել դէպի Տիւրէնչէն, բայց ընկնելով մեր արտիլերիայի կրակի տակ, ան-կարգութեամբ և շփոթութեամբ յետ բաշվեց, այնպէս որ եապոնական բառարեան մինչև անգամ չը կարողացաւ դիւրեք բռնել: Ապրի-լի 14-ին, երեկոյեան 9 ժամին, եապոնացի-ների մօտ երեք բառարեաններ անցան Մա-տուցեօ գիւղի մօտ Եալուի արեւելեան բազու-կով: Ապրիլի 15-ի գիշերը հանգիստ ան-ցաւ. ապրիլի 15-ին առաւօտեան իտալա-ր-կուները իմացան, որ եապոնացիները գրա-ւում են կղզին Սանդագուի գիւղի դիմաց, ունենալով առաջաւոր պահակներ Եալուի աջ ափի վրա: Մեր զօրքերը շարունակում են գրաւել դիւրեք Եալուի աջ ափի վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ապրիլի 17-ին Յարսկո-Սիւրում Բարձրագոյն ներկայութեամբ կայա-ցաւ 1-ին և 2-րդ հրացանաձիգ բառարեանների և Դօնի կազակների բառարեայի զօրահան-դէս:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գեներալ-ադիւտանտ Ալեք-սէիլի ամենահպատակ հետազիւրը ապրիլի 17-ից. «Ամենահպատակօրէն գեկուցանում եմ Ձերը Կայսրական Մեծութեան, որ «Պետրօ-պօլսկայ» զօրահալի ընկղմելու պատճառե-րի առանձին յանձնաժողովի ձեռքով արած ուսումնասիրութիւնը պարզեց, որ զօրահալին անկասկած կպիւ է մի ահանի, որ դրել էր թշնամին մեր նաւատորմի սովորական շար-ժողութիւնների շրջանում, որի մէջ նա մա-նեօլը էր անում, երբ դուրս էր գալիս նա-ւակայանից: Թշնամուն դիմաւորելու համար: Այդպիսի ահանի «Պետրօպօլսկայ» թիւ մա-սում եղած գործիքների և պահեստների տա-կում պայթելու հետեանը, մասնագէտներից կազմված յանձնաժողովի կարծեքով, որի հետ համաձայն եմ ես,—եղան նախ մէջ գտնված ականների յաջորդական պայթումներից: Նրանց մէջ եղած պիթոկիլիին ցնցումից և 12 դիւ-մանոց ուղմերի պայթումը, վառօդի և փա-մփուշների պահեստների հրդեհումը և պայ-թութեւնը ու գրանաձե կաթմանների պայթումը: Այդ բոլոր պայթումները դիտվել են 2 օրակէ ընթացքում, որոնցից յետոյ բոցավառված զրահակիրն անյայտացաւ ջրի մէջ»: Գեներալ-ադիւտանտ Ալեքսէիլի ամենահպատակ հետա-գիրն ապրիլի 17-ից. «Ամենահպատակօրէն գեկուցանում եմ Ձերը Կայսրական Մեծու-թեան, որ ապրիլի 16-ի գիշերը, ժամը 2-ի մօտերը, Ուսսուրեան ծոցում Սկրեպկեան փարոսի մօտ երեւցին թշնամու 4 ականա-նաւեր, որոնք շուտով ծածկվեցին ծովում: Առաւօտեան ժամը 7 և 20 օրակէին Ասկորը կղզուց գեկուցին, որ հարաւից մօտենում են թշնամու 10 կրէյսէրներ և 6 ականանաւեր: Սկզբում էսկադրան դիմում էր դէպի Ուսսու-րիական ծոցը, չը մտնելով մեր կրակի շրջանի մէջ: Առաւօտեան ժամը 10-ին թշնամու էս-կադրան փոխեց ընթացքը դէպի Գամեան հրտանդանը Ռուսական կղզու երկարութեամբ և հասնելով Շիտա կղզու վերին ծայրին, ծովից դէպի հարաւ և ծածկվեց մշուշապատ մառախուղում, որ խանգարում էր դիտողու-թիւնը շարունակելուն:

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՅՅԱ: Գաղաքի տրամադրութիւնը խաղաղ է:

ԵԻՊՏՈՒՐԱ: Հեռաւոր Արեւելքի պատերազ-մական գործողութիւնների պատճառով ու-կիանական մեծ շոգնաւերը հանդիմով վարձ-վում են եւրօպական նաւահանգիստներ գնա-լու համար:

ԲԻԳՍԱ: Արեւ. ք ուղարկվեց լիֆիանդական առողջապահի խումբը: Հիւանդանոցը կազմ-ված է նահանգում հաւաքված նուէրներով և կազմակերպված է 200 մահճակալի համար:

ԲԼԱԴՎՈՒՆՉԵՆՍԿԱ: Նաւագնացութիւնը բաց-վեց:

ՏՕԿԻՕ: Հրատարակված է հետեւեալ պաշ-տօնական հաղորդագրութիւնը «Կինչիօմարուի» խորտակման մասին. «Երբ «Կինչիօմարու» փոխադրող շոգնաւը 2,380 տօնն տարողու-թեամբ և 37-դ գնդի 9 քոտանները վրան Գին-գան էր վերադառնում, ռուսական երեք կրէյ-

սերներ և 2 աղանաւաներ կանգնեցին նրան Սին-Պօից հարաւ: «Բօսիա» կըէյսէրը մօտեցաւ շոգնաւուն: Նաւը նաւապետը, ծովաւորները օֆիցէրները և երկու ուրիշ օֆիցէրները հետ միասին անցկացան «Բօսիայի» առաջնական մասին: Թշնամի մեր զինւորներին մէկ ժամ ժամանակ տուեց անձնատուր լինելու համար: Մի ժամ և կէսից յետոյ թշնամի մէկ աղան բաց թողեց: Մեր զինւորները շարքով կանգնեցին և սկսեցին հրացանաձգութիւն թշնամու հետ, որի ժամանակ մեր զինւորներէից և օֆիցէրներէից շատերը պահպանեցին: Երկու ժամին տեղի ունեցաւ աղանի երկրորդ պայթումը, որը խիստ մեծնայի տեղին և փոխադրող շոգնաւան երկու կէս արեց: Մի քանի առևտրականներ և կուլիներ աւելի առաջ իջան նաւակներին մէջ, նրանց ետևից՝ պայթումից յետոյ՝ հետեցին մի քանի զինւորներ: Նաւակները հասան Սին-Պօ: Նրանք բոլորն էին 45 ուստեր-օֆիցէրներ և զինւորներ, 6 կուլիներ և 3 առևտրականներ: Կարծում են, որ բացի վերոյիշեալներէից՝ կենդանի մնացած բոլոր զինւորականները պահպանեցին: Բոտան կազմած էր 2 կապիտաններէից՝ 2 օբեր-լէյտենանտներէից, 1 լէյտենանտից, 1 պրայօրը-լէյտէից և 73 զինւորներէից:

Բերլին: Եօկօճամայից ստացված տեղեկութիւններ համեմատ, հաստատվում է, որ թուրքերը քանդակ են այն կամուրջը, որ եւապօնացիները դրել էին Նալուի վրա:

ԿՕՊԷՆՀԱՄԲՈՒՐԳ: Թագաւորը ստորագրեց այսօր հրատարակված գէկլարացիան Դանիայի չէզոքութեան մասին: Այն գէպըում, եթէ պատերազմական գործողութիւններ տեղի ունենային դանիական ափերի մօտ, բոլոր ներքին ֆարաւատները Ձէլանդից դէպի հարաւ փակված կը լինեն ստորջրեայ աղաներով: Մուտքը թէ այդ տեղերում և թէ Կօպէնհագէնի նաւահանգստի նաւակայանում արգելված կը լինի պատերազմող պետութիւնների պատերազմական նաւերի համար: Թոյլատրւում է նաւերին մուտ գործել դանիական մնացած նաւահանգիստները այն պայմանով, որ նրանք պէտք է պահպանեն միջազգային ընդհանուր որոշումներ:

ՍՕՖԻԱ: Կտաւարչական շրջաններում հերքում են Նաչէվիչի վերադառնալու լուրը: Պապովում է Մուսի-փաշան, Պարիզի դեսպանը: Նա ունիւրութիւն կունենայ իշխանի մօտ՝ յանձնելու համար սուլթանի ինքնագիր նամակը համաձայնութիւնը աշտարակում կապելու վերաբերութեամբ: Մինչև անգամ կառավարչական շրջաններում գիտակցում են, որ իսկապէս դեռ շատ բան է մնում ցանկանալու, մասնաւոր որ թիւրքաց իշխանութիւնները Մակեդոնիայում և Ալբանիայի վրայէտում չեն թոյլատրեցին բանալու բողոքական մի քանի դպրոցներ և եկեղեցիներ: Դրական տեղեկութիւնները թոյլ են տալիս հաստատելու, որ Թիւրքիան չի սկսի արձակել իր զօրքերը այն պատճառով, որ մի քանի փոքր չեռաներ շարունակում են անհանգստացնել սահմանի վրա գտնվող մի քանի բնակավայրեր: Բնֆօրմիների մտքները շարունակում է առաջ գնալ: Այլ ևս հիմք չը կայ երկրի կրկու նոր ապստամբութիւնից և բարդութիւններից Մակեդոնիայում:

18 ապրիլի

ՊԵՏԵՐՖՈՒՐԳ: Նշանակված է սենատոր գերաւ-լէյտենանտ Տրէպով մանչուրական զօրքի սանիտարական մասի հրամանատար:

ԻՐԱՅԻՍՏԻ: Հաղորդակցութեան ճանապարհների միջնատրք ժամանեց Բայկալ, ապա ուղևորվեց Տանիսոյ կայարանը, իսկ այդտեղից էլ Կուրտուկ, յետոյ անցաւ դէպի Իրկուտսկ, ուր գիշերելով, միջնատրք վերադառնում է: Սառցահատ «Բայկալ» ապրիլի 18-ին անցաւ 5 վերստ Տանիսոյ ուղղութեամբ:

ՄԱՆ-ԼՈՒԻ: Տեղի ունեցաւ համաշխարհային ցուցահանդէսի բացումը: Նախագահ Բուգ-վէյտ սեղմեց Վաշինգտոնում էլէկտրական հաղորդիչի կոճակը՝ և մեքենաները սկսեցին բանել ցուցահանդէսում:

ՄԱՐՍԵՆ: Սպանիական ծովապետ Սանտասո գնաց «Մարսէլիէ» նաւը, ուղևորեց Լուրէին և ճառի մէջ ասեց, որ բերում է նախագահին Թագաւորի ուղղութիւն: Լուրէն շնորհակալութիւն յայտնեց:

ԿՕՊԷՆՀԱՄԲՈՒՐԳ: Ապրիլի 17-ին սկսեցինաւան մայրաքաղաքներում յայտարարված են չէզոքութեան հիմքերը:

ՍՕԿՅՈՒՄ: Բէյաթագը թոյլատրեց վեց միլիօն կոնս ծախսել ծովային նոր կառուարներին համար:

ԱՌԷՆԲ: Զմիւռնիայում տեղի ունեցած դէպ-

քի առիթով հարցապնդումին, միջնատրք նախագահը յոյս յայտնեց, որ մօտ ժամանակներս տեղի կունենայ կատարեալ բաւարարութիւն, իսկ ինչ վերաբերում է այդ դէպքի հիմքում դրված պրինցիպիական հարցին, այդ վերջինը լուծելու համար Յունաստանը կը դիմէ պետութիւններին:

ՆԻՒ-ԵՕՐԿ: Սան-Լուի համաշխարհային ցուցահանդէսը գնացող արտակարգ գնացքը բէլսերից իջաւ Կիմալիում, Միսսուրիի նահանգում: 50 մարդիկ սպանուեցին և վիրաւորվեցին:

ԿԱՆՈՒԳԱ: Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչ ճանապարհ ընկաւ Կալուգայից:

ՎԻԷՆԱ: Նկարիչների ընկերութեան նիստի ժամանակ նախագահողը մի ջերմ ճառ արտասանեց, նուիրված Վ. Վ. Վերեշչագինի յիշատակին:

18 ապրիլի

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 18 ապրիլի (Սեփական թղթակցից): Պօրտ-Արտուրի շրջանում փոփոխութիւններ չը կան: Մի հասարակ զինւորի շնչառութեան օրգանները թշնամու պայթած ուռմից արձակվող գազերից թունաւորվելու պատճառով, հաստատվում է այն փաստը, որ եւապօնացիները գործ են ածում լիգիտ: «Новый Край» լրագիրը շեշտում է, որ գերմանական և ֆրանսիական գաղութական մասուրի լուրջ և անկողմնապահ լեզուն մասամբ թուլացրեց հեռաւոր Արեւելքի անգլո-ամէրիկական մամուլի առևտրեայ նկրտումները: Ապրիլի 16-ին Վաշինգտոնի մօտեցաւ թշնամու էսկադրան և նոյն օրն և եթ անհետացաւ:

ՎԻԷՆԱ: Քննելով միջամտութեան մասին տարածված լուրերը ուսումնասիրական պատերազմի մէջ և առև կառավարութեան շրջաբերական հաղորդագրութիւնը, «Ֆրէմդէ-բլատտ» լրագիրը հետեւալ կարծիքն է յայտնում: «Որպէս զի պատերազմը լաւ վերջաւորութիւն ունենայ, պէտք է շարունակել կոնքրետը ոյժերով, ամբողջ արտոյ՝ Ի հարկէ ցանկալի չէր լինի, որ հասարակութիւնը հաւատարմիջամտութեան վերաբերեալ լուրերին: Ռուսաստանը ցանկանում է անկախօրէն լուծել վէճը Եւապօնիայի հետ: Ռուսաստանը հասկանալի է բոլորովին հաւատարմացած է, որ թշնամու հետ ունեցած կուլի մէջ ինքն միայնակ գլուխ կը հանի, և այդ պատճառով խաղաղութիւն կապելու ժամանակ ևս ցանկանում է միայնակ լինել: Ռուսաստանը գէպը չի դնի մինչև չը յաղթէ և թէ ինչ պայմաններին նա հնարաւոր կը գտնի համաձայնվելու, նա այդ բանը ինքն է կամենում վճարել: Ոչ ոք չէ կարող կասկածել Ռուսաստանի դիտարկութիւնը՝ հաստատելու իր իշխանութիւնը Արեւելքում, այդ պատճառով կարելի է միայն հարցնել. թէ ինչպէս կարող էին միջամտութեան մասին լուրեր ծագել»:

ԱՌԷՆԲ: Բ. Դուրը հաղորդեց յունաց դեսպանին Զմիւռնիայի վալիի զեղուցման բովանդակութիւնը, որը տեղի ունեցած միջնադէպքի ամբողջ պատասխանատւութիւնը վերադրում է յունական դեսպանութեան պաշտօնատար անձանց: Այստեղ գոյութիւն ունեցող ենթադրութեան համեմատ, եթէ Բ. Դուրը հակամիտ լինէր բաժանելու այդ կարծիքը, գրութիւնը լուրջ կերպարանք կընդունէր:

ՄՈՒԿԻՆԷ, 18 ապրիլի (սեփ. թղթ.): Ապրիլի 16-ին մէկ ու կէս հազար մարդուց բաղկացած եւապօնական զօրաբաժինը, 12 թնդանութիւնով անցաւ Նալու գետով Ամբիսի մօտ: Մեր զօրաբաժինը, փոխ-գերապետ Գուսէվի հրամանատարութեամբ, բաղկացած երկու բաժաններից և 3 հարկաւորներից երկու լեռնային թնդանութիւնով, եւապօնացիների թնդանութիւնների զօրքը կրակի տակ կարգով յետ բաշկեց՝ դէպի ետեւ գտնվող ամբարձրութիւնները: Մեր ունեցող չորս վիրաւորվածներ և մէկ թնթ և վիրաւորված: Ապրիլի 18-ին, առաւօտեան 8 ժամ 30 րոպէին, ժամանեց մանչուրական զօրքի հրամանատար գերաւոր Կուրապալին: Գնացքի գալու ժամանակ կայարանում հանդէս էր բերված պատուաւոր պահակաւորներ—1-ին սրէտէնանտ պահապան գնդի մի վաշտ՝ երազյաղական խումբով, նոյնպէս ժամանեց մուկլէնեան ցզեանցիւնը միջնատրքների հետ: Ընդունելով բապօրու և անցնելով պահակաւորների և ներկայի կողմների առկից, գերաւոր-աղիւտանտ Կուրապալին ընդունեց վազմում ցզեանցիւններ և միջնատրքներին, որից յետոյ ընդունեց ցզեանցիւնի առաջնական շամպայն գինին կայարանում: Զօրքի հրամանատարը առաջարկեց նորին Կայսերական Մեծութեան փոխարքայի կենացը Հեաւոր-Արեւելքում և խմեց

ցզեանցիւնի կենացը: Վերջին ցանկացաւ զօրքի հրամանատարին աղիւտութիւն գործերում և յաղթութիւն թշնամու վրա: Ապա հանդիսաւոր մարշով անցնելով պահակաւորները իր առջևից, զօրքի հրամանատարը 1-ին սրէտէնանտ պահապան գնդի զօրահանդէս կատարեց և շնորհակալութիւն յայտնեց զօրքերին քաջարի և թարմ տեսքի համար, ապա իր շտաբի պաշտօնեաների ուղեկցութեամբ աչքի անցրեց Մուկլէնի շրջակաները և ճանապարհ ընկաւ մօտ երեք ժամին:

ՊԵՏԵՐՖՈՒՐԳ: Գլխաւոր շտաբի հաղորդագրութիւնը գործերի գրութեան մասին Նալու գետի վրա ապրիլի 16-ի և 17-ի ընթացքում: «Մանչուրական զօրքի հրամանատար գերաւոր-աղիւտանտ Կուրապալինի հեռագիրներէից, որոնք ստացված են ապրիլի 18-ին, երևում է, որ Նալուի աջ ափն անցած եւապօնացիները Սինդեագուտի գետի մօտ, գրաւեցին Սուսան և Լիզալէն գետերը: գերաւոր Զատուլի, ի նկատի ունենալով կրկին գրաւել Լիզալէնը և բարձրութիւնները Սուսանի մօտ, ապրիլի 16-ին եւապօնացիները գրաւած դիրքերը սաստիկ հետախուզութեան ենթարկելուց յետոյ, նշանակեց զօրախումբ, ընդհանուր շտաբի փոխ-գնդապետ Լինդի հրամանատարութեամբ: Լիզալէնի և Սուսանի մօտ եղած դիրքերը պաշտպանում էր եւապօնական զօրաբաժինը, որ բաղկացած էր 4-րդ գվարդիական գնդի 2 բաժանիցից լեռնային թնդանութիւնով և գվարդիական հեծելազօրնների փոքրաթիւ մասից: Պատէտեանցիկ կողմից մեր թնդանութիւնի կրակի օգնութեամբ մեր զօրաբաժինը եւապօնացիներին դուրս օղեց դիրքերից, կորցնելով 2 հրացանաձիգներ սպանված և 13-ը վիրաւորված: Եւապօնացիները գիրքերի վրա թողին 10 սպանվածներ: և 26 վիրաւորվածներ: Բացի դրանից, վիրաւորվածների մի մասը տարվեց, իսկ մի քանիսները զաւիւղայրեով սողացին դէպի Նալու: Լեռնային բաժաններն եւապօնացիները տարան: Գրաւելով բարձրութիւնները Սինդեագուտի մօտ, մեր զօրաբաժինը ընկաւ Ի-Չօուից դէպի հարաւ գրված եւապօնական բաժանիցի զօրքը կրակի տակ: Մեր երկու թնդանութիւնը ուժաւորված էին պօսոնեան կամուրջը, որը եւապօնացիները ստիպված էին քանդել: Եւապօնական զօրաբաժինը Լիզալէնից և Սուսանից մասամբ յետ քաշվեց դէպի Նալու, մասամբ էլ դէպի հիւսիս: Եւապօնացիների դիրքի վրա առաջի գտնված են 10 պտուտակաւոր հրացան, շատ փամփուշտներ, կազմավորված և խաղաղութիւն: Մանաւոր կարճութեամբ էին գործում 10-ը և 12-ը գնդերի կամաւորները, պօրուչիկ Նանչիսի հրամանատարութեամբ: Ապրիլի 16-ին, առաւօտեան 10 ժամին, եւապօնական մինչև 1500 հետեւակներից բաղկացած զօրաբաժինը 12 թնդանութիւնով սկսեց գետն անցնել Ամբիսի և Շօգուպուլայի մօտ: Ամբիսի գետաբերանի մօտ գտնվում էր փոխ-գնդապետ Գուսէվի փոքրաթիւ զօրաբաժինը: Այս զօրաբաժինը ստիպված էր յետ քաշվել եւապօնական թնդանութիւնի 6 մարտկոցների անընդհան կրակի տակ, կորցնելով 4 զինւոր և վիրաւորված և սպանված և փոխ-գնդապետ Գուսէվին, որ թնթ և վիրաւորվեց գլխից և ձախ թնթից: Մեր լեռնային թնդանութիւնը, տեղի հեռաւորութեան պատճառով, չը կարողացան պատասխանել: Զօրաբաժինն օգնութիւն է ուղարկած, պատուիրելով եւապօնացիներին ընդ Նալուի միւս ափը: Գերաւոր Միշչենկօյի ստացված է գերաւորում, թէ ապրիլի 16-ին եւապօնական նաւերից, Նալուի բերանին, կրակ բացին մեր զօրքերի վրա, որ 20 րոպէ տեւեց և ոչ մի ֆրաս չը պատճառեց: Ինչօրում ամեն ինչ խաղաղ է: Ապրիլի 17-ին, առաւօտեան 10 ժամից մինչև երեկվայ 5 ժամը եւապօնացիները ուժաւորված էին մեր դիրքը Տիւրէնչիւնում, ձախ ափին գտնված մարտկոցներից, որտեղ նրանք գետեղել էին մինչև 24 դաշտային և 12 հաս 12 սանտի-

պետ Պախալով, ծանր վիրաւորված է գլխից 6-ը թնդանութեան զօրքաղի մարտկոցի հրամանատար փոխ-գնդապետ Մալէր: Վիրաւորված են 6-ը թնդանութեան զօրքաղի գնդապետ Մէստէր, կապիտան Վօրօքով, շտաբ-կապիտան Սապօֆիլով և պօրուչիկ Ֆիլադելֆօլ և 2-ը սապօրական գնդի շտաբ-կապիտան Անդրօշնիկօ: Իրոսանի մօտի դիրքում—ծանր վիրաւորված է գլխից 22-ը գնդի պօրուչիկ Անտրօպօլ: Ստորին զինուորների կուրուստը այս երկու դիրքերում դեռ ճշտեւ չէ որոշված, բայց առ այժմ եղած տեղեկութիւններին նայելով՝ սպանված են 3, վիրաւորված են 19»:

19 ապրիլի

ՊԵՏԵՐՖՈՒՐԳ: Գլխաւոր շտաբի հաղորդագրութեան վրա գործերի գրութեան մասին ապրիլի 18-ից: «Ապրիլի 18-ին, առաւօտեան ժամը 4-ից, եւապօնական դաշտային և 12 սանտիմէտրանոց մարտկոցները ամենագործել կրակ բաց արին տիւրէնչիւնեան դիրքի և Պօտէտնցիկի մօտ քառաւորված զօրքի վրա: Եւապօնացիների թնդանութիւնի քանակը ճշտող գերաւորութիւնը և այդ դիրքերը բռնած զօրաբաժինը ուռմերից կրած մեծ կորուստները ստիպեցին գերաւոր Զատուլիին անհամապատասխան ճանաչել տիւրէնչիւնեան դիրքն ալ ևս պահպանելը: Զօրքերին հրամայվեց հեռանալ, բռնելով ճանապարհին եղած դիրքերը: Գերաւոր Զատուլիի հեռագիր ուղարկած ժամանակ Տիւրէնչիւնից և Շախէճից զօրքերը նահանջում էին իրաւասար կարգով դէպի երկրորդ դիրքը: Պատէտնցիկի և Զինգուտի մօտ դեռ կուր շարունակվում էր»:

ՈՒԿԻՆԷ: Յատուկ յանձնաժողովը խնդրում է նախընթաց լուրի մէջ ուղղել սպրդված սխալը: «22-ը արեւելեան սիւրբեան հրացանաձիգ գնդի մէկ բաժանիցից և 10 ու 12-ը գնդերի կամաւորների կօմանդաներից կազմված զօրաբաժինը՝ երկու թնդանութիւնով՝ գլխաւոր շտաբի փոխ-գնդապետ Լինդի հրամանատարութեամբ, հրաման ստացաւ դուրս բերել եւապօնացիներին, որ 4-ը գվարդիական գնդի երկու բաժանիցից և հեծելազօրքի մի փոքր մասից կազմված զօրաբաժինը լեռնային թնդանութիւնով միասին դիրք էին բռնել Լիզալէնի և Սուսանի մօտ: Եւապօնացիները ստիպված էին թողնել բարձունքները, դիրքում թողնելով 6 սպանված, 26 վիրաւոր, 10 հրացան և շատ փամփուշտ ու ուղղամիւրք: Մեր կորուստներն են. 2 հրացանաձիգ սպանված և 13 վիրաւոր: Ի-Չօուից հիւսիս ձգած պօսոնեան կամուրջը քանդվել է մեր թնդանութիւնի հրաւաններով:

ՏՕԿԻՕ: (Բէյտ. գործ.): Անցաւ երեքշաբթի եւապօնացիներն սկսեցին Նալուի վրա առաջ շարժվել: Ընդհանրաւոր շարունակվում էին չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ. ապրիլի 18-ին սպանված է վճռական ճակատամարտ: Հինգշաբթի եւապօնացիներն անցան Նալուն և կենտրոնացան գետի աջ ափին: Երէկ կուր տեղի ունէր երկար տարածութեան վրա, որի ժամանակ արձակվում էին պաշարման թնդանութիւնով գետի վրայով: Այսօր լուսաբացին կուր վերակիցեց: Ռուսները թիւը հաշվում է 30,000: Եւապօնացիները գերաւորում են, որ իրանց կորուստներն աննշան են:

ՄԱՅԻՅ: Վիւնիմ կայսրը ժամանեց այստեղ: ՏՕԿԻՕ, 18 ապրիլի: (Բէյտ. գործ.): Այսօր եւապօնացիները տիրեցին Կիւլէնօֆին, որ համարվում է Նալուի աջ ափի ուսումնական դիրքը: Բանալին: Այստեղ ենթադրւում են, որ ուսումները նահանջում են դէպի Ֆինիստանչէն:

ՏՕԿԻՕ: (Բէյտ. գործ.): Եւապօնական 12-ը գլխաւոր ապրիլի 17-ին մինչև լուսաբաց անցաւ Նալուն Ի-Չօուից վրա: Երեկոյան 8 ժամին պատրաստ էր երկրորդ պօսոնեան կամուրջը: Գերաւոր ընթացքով գետն անցան գվարդիական և երկրորդ գլխաւորները և ապրիլի 18-ին շփման մօտ ուսաց ձախ թնթ հետ:

ՄԵՎԱՍՏՕՊՈԼ: Ապրիլի 18-ին ծովապետ Սկրիբովը հրաժեշտ տուեց կօմանդաներին ծովապետ Լազարովի արձանի մօտ և ստացաւ «Թագաւոր Կայսրը բարեհաճեց նշանակել ինձ խաղաղ ուղեւորական նաւատորմի հրամանատար Իմ Թագաւորի կամքն ինձ համար սուրբ է, բայց չեմ ծածկում, որ ես թողնում եմ սեծովեան նաւատորմը շատ աղետալ, որովհետեւ կարճ ժամանակում կաւորացաւ ճանաչել նրան և սիրել և բոլորովին համոզված էի, որ եթէ բաղդին հաճոյ լինէր, որ ես սեծովեան նաւատորմով միասին կուր մտնէի թշնամու հետ, դուք այն ժամանակ կը կուէիք՝ ինչպէս ձեռ հայրերը և պապերը

148, 174